

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԲԻԵՆԱԼԵ 2021
(20-23.10.2021)

2021թ.ի հոկտեմբերի 20-23-ը ԵՊՀ մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ Հայաստանում առաջին անգամ կանցկացվի երիտասարդ ստեղծագործողների և կատարողների միջազգային ուսանողական բիենալե: Բիենալեն կանցկացվի հետևյալ ուղղություններով՝

Ստեղծագործական մրցույթ

1. *Կոմպոզիտորական մրցույթ*
2. *Գրական մրցույթ*
3. *Կերպարվեստի, լուսանկարչության և կիրառական արվեստի մրցույթ*

Կատարողական մրցույթ

1. *Երգի մրցույթ (անհատական կատարում, զուգերգ, խմբերգ)*
2. *Ասմունքի և թատերական մրցույթ (ներկայացում մինչև 15 րոպե)*
3. *Պարային մրցույթ (անհատական կատարում, զուգապար, խմբակային կատարում)*
4. *Գործիքային մրցույթ (անհատական և նվագախմբային կատարումներ)*

Ներկայացված ստեղծագործությունները գնահատվելու են պրոֆեսիոնալ ժյուրիի կողմից: Յուրաքանչյուր ուղղության համար նախատեսված մրցանակային տեղերից և պարգևատրումներից բացի, փառատոնի մասնակիցները կստանան նաև պատվոգրեր և հուշանվերներ:

Բիենալեի ընթացքում տեղի կունենան հետևյալ գլխավոր միջոցառումները.

- մասնակիցների աշխատանքների ցուցահանդես
- ԱՊՀ երկրների մշակույթ տոնավաճառ
- Բիենալեի գալա համերգ

Անցկացվելու են նաև արվեստի և մշակույթի վերաբերյալ դասախոսություններ, քննարկումներ, կլոր-սեղաններ, մասնագետների կողմից վարպետության դասընթացներ:

Բիենալեին կարող են մասնակցել ԱՊՀ երկրների բուհերի ուսանողները: Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել հայտը, դրան կցել նաև ինքնակենսագրությունը, անձնագրի պատճեն, տվյալ բուհից տրված տեղեկանքը, ներկայացվող աշխատանքի էլեկտրոնային տարբերակը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2021թ. Հունիսի 25-ն է: Մնացյալ մանրամասների վերաբերյալ գրանցված մասնակիցները կտեղեկացվեն անհատապես:

Հայտաձևի մեկ օրինակը կցված է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ԵՊՀ Մշակույթի կենտրոն:

Հեռ.՝ քաղ. (060)710-183, (060)710-184, ներքին՝ 11-83, 11-84

Կայք էջ՝ www.yasu.am/culture

<https://www.facebook.com/ephculturecenter/>

Էլ. Հասցե՝ culturecenter@yasu.am